

Քալիֆորնիա Ս . Ֆրանչիսկոսի մէջ ոսկեհանքի ելքը պատճառաւ հինգ տարուան մէջ եղած փոփոխութիւնը :

ՀԻՍՏՈՐԻԱԿԱՆ ԱՄԵՐԻԿՈՅ ՄԷՔՍԻԿՈՅ ՀԱՍԱՐԱԿԱՅԵԱՆ ԹԻՒՆԻՆ ՄԵՋ ՔԱԼԻՖՈՐՆԻԱ ԸՆԴՈՒՄԻ ԿՈՂՄԵՔԱՆԻ ՄԵՆ ՏԱՐԻ Է ՈՐ ՈՍԿԵՆՆԵՐ ՀԱՆՔ ՄԵՐ ԳՐԱՆՈՒՆԵՂԱԼ : ԱՆՈՒՅՈՒՄ ԵՄ ԵՐԿՈՒ ԿԱՆԱԿԱՆ ԿԵՐԿԻՐ ՄԵՆ ԷՐ . ՀԻՄԱ յԱՍ ՄԵԿ ԵՐԿՈՒ ՏԱՐՈՒՆԱՆ ՄԵՋ ՈՍԿԵՆՆԵՐ ԿԱՆԱԿԱՆ ՀՈՆ ԵՂԱԾ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆԸ ՀԵՏԱՔԵՐՔԱԿԱՆ ԸԼԱՎՈՒ . ՔԱԼԻՖՈՐՆԻԱՅ ԸՄԱԳԵՐԵՄԵՆ ԿՐ ԴՆԵՆՔ :

1845ին Քալիֆորնիա Ս . Ֆրանչիսկոսի մէջ 150 հոգւոյ չափ բնակիչ կային . իսկ 1847ին բնակչաց թիւը եղաւ 375, առանց համընդհանրի մը բնիկ սեւերը : Եւ նոյն տարին հոկտեմբերին բնակիչներն եղան 800 հոգի : Եւ որովհետեւ հասարակապետական կառավարութեամբ կր վարուին , 1848ին հոկտեմբերին առեւտրական պաշտօնատեարք ընտրութիւն ընելու համար վիճակարկուաց թիւը 150 էր , և նոյն տարւոյն դեկտեմբերին 347 : Քանի մը ամէնէն ետեւ 1849 օգոստոսին վիճակարկուաց թիւը եղաւ 1519 հոգի . և այսպէս հետզհետէ աճելով , անցեալ տարի յունուարին վիճակարկուեք եղան 10,000 և բնակչաց թիւը 30,000 հոգի :

1847 մարտի 8ին վեց նաւ կար նաւահանգիստը . նոյն տարւոյն դեկտեմբերի 18ին 4 միայն մնացեալ էր : 1848ին յունիւ . փետր . ու մարտ ամիսներուն մէջ 9 նաւ եղեր էր . որոնցմէ չորսը Մոնթէրէյ ու Սան Փետրոյ մօտիկ նաւահանգիստներէն էին :

1852ին յունիւարի 1էն մինչև հոկտեմբերի 31 եկող նաւերուն թիւը 827ի հասեր էր , ու ամենուն մէկ սեղ ընտրած վաճառքը 370,345 տակառաջափ . ու նոյն տարւոյն դեկտեմբերի 20էն աւելի նաւ կեցեր էր նաւահանգիստին մէջ : Անցած տարւոյն յունուարի առջի օրէն մինչև 31 հոկտեմբ . մաքսատուն ժողովուած ստակը 1,060,842 տողար էր . իսկ ծովով եկած ճամբորդներուն թիւն էր 58,851 , ու գացողներուն 19,575 :

1848ին սեպտեմբերին շինուեցաւ առաջին աղիւսաշէն տունը որուն նման մէյմ'ալ Մոնթէրէյ շինուած կար , որով վերին Քալիֆորնիոյ մէջ երկրորդ աղիւսաշէն տունը եղաւ ասիկայ :

Ոսկեհանքին գանուելուն առջի երկու ամիսները , Ս . Ֆրանչիսկոս տարուած ձող և փոշի ոսկեոյն չափն էր 250,000 տողար , որ կ'ընէ , 1,250,000 Փռանք , ու յաջորդ երկու ամիսները գրեթէ 600,000 տողար : Իսկ հիմա 5 միլիոն տողար կ'ըլլէ իւրաքանչիւր ամիս , որ է ըսել 25 միլիոն Փռանք :

Քալիֆորնիոյ առջի բողոքական մատուռը կրկնականութենէն հաստատուեցաւ , ու 1849ին Օգոստոսի 5ին բացուեցաւ : Այսօրուան օրս 18 եկեղեցի կայ , երկուքը ուղղափառաց , մնացածը բողոքականաց :

Անցեալ յունուարի՝ 5 ամենօրեայ ըրագիր կար ու 7 շաբաթական . 20 գրամափոխութեան ա-

ռանձին տներ , 24 աճուրդի տներ , 4 բաղանիք , 16 հացագործի խանութ , 17 վարսաւիրայի խանութ , 42 դարբին , 3 գրամաճառ ու թղթաւաճառ , 36 կօշիկ վաճառական , 28 մսագործ , 59 առողջագործ ու հիւան , 62 զգեստի վաճառական , 9 խեցեղէն անօթի ու ապակեղէնի , 130 միջնորդ վաճառականի , 34 դեղավաճառ , 9 վաճառական կահարասեաց , 9 կերպասեղէնի , 27 երկաթեղէնի , 93 համեմովաճառ , 6 ախոռ վարձուոր ձիերու , 28 տարաղագործի ու դերձակի խանութ , 26 նկարիչ նաւի վերաբերեալ բաներու , 8 թամբագործ , 9 նաւու հանդերձապետ , 24 տապակագործ , 23 զգեստ կտրողի խանութ , 18 պատտառագործ , 40 ժամագործ ու մանր մունր զարդեր ծախող , գրեթէ 60 բժիշկ , ու 150ի չափ փաստաբան կամ օրէնսգէտ մարդիկ :

ՏՆՏԵՍԱԿԱՆ

Հաւան , լայրի ինտանէտը և հասարակ փուլ ինտանէտը :

ՊԵՏԵՔ Է ՆՈՐ ՄՈՐԹԱԾ ԿԵՆԳԱՆԻՆ ԿԱԽԵԼ ԹՈՒՂԻ ԾԱՌԻ ՄԵՆ ԾԻՒՂԷ , և ԾԱՌԻՆ ՏԵՐՆԵՐՈՒՎ ՉԻՍԸ ԸՆԴ ՄԵՆ ԾԱԾԿԵԼ . ՔԻՆ ԱՌԵՆԻ ՄԵՋ ՄԻՍԸ ԿՐ ԿԱԿՂՆԱՅ և շատ փափուկ կ'ըլլայ : Հարկ չէ երկայն տուն թողուլ հոն միսը . լաւ ըլլալու համար կէս ժամ կամ իրեք քառորդ միայն բաւական է . իսկ թէ որ աւելի թողուս միսը կաւրուի :

ՁԱՆԸ ՆԵՒՆԻՆԻՆ ԿԱԿԵԼ՝ ԻՆԿ :

ԴԻՐ ԶՈՒԿՐ ԱՄԱՆԻ ՄԵՋ , ՈՐՈՒՆ ՄԵՋ ՔԻՆ ՄԵՆ ԶՈՐ և աղ լեցու , և այնպէս կրակին վրայ դիր մինչև որ սկսի ջուրը եփել . անտունը վար առ . այսպէս կրնաս թողուլ ձուկը առանց աւրուելու երկու կմ իրեք օր այն աղի ջուրին մէջ ծածկուած : Թէ որ մէկ քանի օր աւելի ուղեւ պահէ , պէտք է նորէն կրակի վրայ դնել , մէջը նորէն կտոր մը աղ ձգելով ու քանի մը գափնի տերեւ : — Ձուկը մինչև իրեք անգամ այս կերպով սեփ հանելով կրնաս պահել առանց աւրուելու . բայց եթէ աւելի շատ անգամ ընելու ըլլաս , ձուկը երթալով համը կը կորսնցնէ :

Աս բանիս համար հողէ աման պէտք է գործածել վան ղի երկրթէ ամանը մէկ անխորժ համ մը կու տայ ձկան , իսկ պղնձը ժանգի թոյն կու տայ որ մահաբեր է կենաց :